ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐՅԵԿՏՆԵՐԻՆ ԿԻՑ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

СИГНАЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

614
Կ-21

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԱՆԼՈՒՍ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1939

17.05.2013 3443
614/4-21 կր.
20 JUL 2010
3818
39

«Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ»

ԽՍՀՄ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏՍԱՆՏԵՍՈՒՉ ՏԿԱՉԵՎ

14 ապրիլի 1939 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԿԻՑ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Սանիտարական հանձնաժողովները կազմակերպվում են տնային վարչություններին կից, մանր տնտեսություններ միավորող փողոցային կոմիտեներին կից, հանրակացարանների պարետություններին կից, յերեքից մինչեվ հինգ հոգուց բաղկացած կազմով:*

2. *Սանիտարական հանձնաժողովներն ընտրվում են տնվորների ընդհանուր ժողովում մեկ տարի ժամանակով:*

Ծանոթություն— 1) *Սանիտարական հանձնաժողովների ընտրությունների կազմակերպումը և անցկացումը կա-*

տարվում է տնային վարչության կամ պարետության կողմից, մասնակից դարձնելով փողոցային կոմիտեներին:

2) Յեթե հանձնաժողովի անդամներից վորևվե մեկը չի կարողանում կատարել իրեն վրա դրված պարտականությունները, կատարվում է հանձնաժողովի նոր անդամի մինչժամկետային ընտրություն:

3) Սանիտարական հանձնաժողովներն իրենց կազմից առանձնացնում են նախագահ և քարտուղար:

4) Սանիտարական հանձնաժողովի նախագահն ընտրություններից հետո յերեք օրվա ընթացքում պարտավոր է ներկայանալ քաղաքային կամ շրջանային պետսանտեսչին, ընտրված սանիտարական հանձնաժողովի կազմի մասին հայտնելու համար:

Ծանոթություն.— Սանիտարական հանձնաժողովների անդամները վկայականներ են ստանում տան կառավարչից, փողոցային հանձնաժողովի նախագահից, պարետից տնվորների ընդհանուր ժողովների արձանագրությունների հիման վրա:

5· Սանիտարական հանձնաժողովի անդամները գործունեության կամ վոչ ճիշտ գործունեությունները հայտնաբերելու դեպքում Պետսանտեսչին իրավունք ունի տնվորների ընդհանուր ժողովի առաջ դնել սանիտարական հանձնաժողովի մինչժամկետային վերընտրության հարցը: Այդպիսի դեպքերում պետսանտեսչության ներկայությունը տնվորների ընդհանուր ժողովում պարտադիր է:

2. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

6· Սանիտարական հանձնաժողովներն իրենց վողջ աշխատանքը տանում են պետսանտեսչության ղեկավարությամբ, վորը պետք է ապահովի այդ ղեկավարությունն ու հրահանգումը:

7· Սանիտարական հանձնաժողովները մշակում են սանիտարա-առողջապահական ձեռնարկումների պլաններն ըստ տնտեսությունների ու հանրակացարանների, ամենամոտ ժամանակում իրագործելու համար (յեռամսյակային):

8· Սանիտարական հանձնաժողովները

կազմակերպում են տնվորների մեջ մրցակցություն — լավագույն սանիտարական դրության մեջ պահելու բնակարանները, սենյակները և այլն, լայնորեն ոգտագործում են տնային հասարակայնության, իրենց աշխատանքը կապում Կարմիր Խաչի, Կարմիր Կիսալուսնի և Պաշտ-Սվիաքիմի տեղական կազմակերպությունների հետ:

9. Սանիտարական հանձնաժողովներն իրենց աշխատանքում հաշվետու են տնվորների ընդհանուր ժողովի առաջ և յուրամյակում մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում պետսանտեսչությանը:

10. Հաշվետու ժողովների մասին սանիտարական հանձնաժողովները տեղեկացնում են պետսանտեսչության համապատասխան մարմիններին:

3. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Սանիտարական հանձնաժողովի պարտականության մեջ են մտնում՝

ա) սիստեմատիկ կերպով հսկել տների և հանրակացարանների տնվորների կողմից սանիտարական կանոնները պահպանելուն, բնակելի շենքերի և ընդհանուր ոգտագործման տեղերի մաքրելուն և ոգտվելուն, ջրմուղի և փոյուղու, ինչպես նաև կենտրոնական ջեռուցման սարքավորումները սարքին դրության մեջ պահելուն.

բ) հետևել, վորպեսզի ընդհանուր ոգտագործման տեղերում լինեն թքամաններ, աղբի արկղներ և ժամանակին մաքրվեն նրանք.

գ) հետևել, վորպեսզի բակերը մաքրվեն աղբից ու ձյունից, ժամանակին մաքրվեն աղբահորերն ու կեղտաջրի հորերը:

դ) աջակցել պարազիտների և կրծողների վոչնչացման աշխատանքի կազմակերպմանը տներում և հանրակացարաններում.

յե) հետևել կանաչ տունկերի պահպանությանը.

զ) պարբերաբար հետազոտել տան մեջ յեղած վոչ բնակելի շենքերի (առևտրական, արտադրական, պահեստային, դրասենյակային և այլն) ինչպես նաև տնային կուլտ-կենցաղային հիմնարկների (ճաշարանների, լվացքատների, մանկական հրապարակների) սանիտարական դրությունը.

է) աջակցել անների և հանրակացարանների բնակիչներին՝ բուժոգնությունը ժամանակին ստանալու գործում (կախել հայտարարություններ բուժհիմնարկների հասցեների և հեռախոսների մասին, ընդունելության տեղի և ժամանակի մասին, անհետաձգելի և շտապ բուժոգնություն կանչելու մասին, տնային ոգնության համար կանչելու ժամանակի ու տեղի մասին և այլն)։

ը) ոգնել պետսանտեսչին և բուժհիմնարկներին վարակիչ հիվանդությունների դեմ մղվող պայքարի գործում (յերեվան բերել հիվանդներին, միջոցներ ձեռք առնել ժամանակավորապես մեկուսացնելու վարակիչ հիվանդներին մինչև նրանց բուժ. հիմնարկներ ուղարկելը, աջակցել բուժաշխատողներին դեզինֆեկցիա կատարելու գործում և այլն)։

թ) աջակցել նախապահպանական պատվաստումներ կատարելուն, այդ մասին հայտնելով տնվորներին, հայտարարություններ կախելով պատվաստումներ կատարելու տեղերի և ժամանակի մասին։

ժ) ստուգել տեղական խորհուրդների

կողմից հրատարակված սանիտարա-առողջապահական բնույթ կրող պարտադիր վերջումների կատարումը։

ի) կազմակերպել սանիտարա-լուսավորական աշխատանք և ոգնել բուժաշխատողներին նրա անցկացման գործում (դասախոսություններ, զրույցներ, դեկուցումներ, հարց ու պատասխանի յերեկոներ), բաժանել ու կախել սանլուս գրականություն և պլակատներ։

լ) սանիտարական հանձնաժողովների անդամները պարտավոր են բարձրացնել իրենց սանիտարական գիտելիքները, սանիտարական հանձնաժողովի անդամների համար կազմակերպված դասընթացներն անցնելով, ՊԱՊ-ի կրծքանշանի նորմաները հանձնելով, սանիտարական գրականություն կարդալով, սանիտարական դասախոսությունների հաճախելով և սանիտարական կանոններն օրինակելի կերպով կատարելու օրինակ տալ։

4. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

11. Սանիտարական հանձնաժողովների անդամներն իրավունք ունեն բնակարաննե-

րի պատասխանատու անձանց կամ բնակելի և վոչ բնակելի շենքերի վարձակալների ներկայությամբ զննել բնակարաններն ու ընդհանուր ոգտագործման տեղերը ժամի 11-ից մինչև 21-ը, իսկ վոչ բնակելի շենքերում՝ նրանցում աշխատող հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների աշխատանքի ժամերին:

12· Սանիտարական հանձնաժողովներն իրավունք ունեն 3-րդ գլխում շարադրված սանհանձնաժողովների պարտականությունների համեմատ ցուցումներ տալ այցելության ժամանակ իրենց հայտնաբերած սանիտարական բնույթի թերությունները իրենց կողմից սահմանված ժամկետին վերացնելու մասին: Սանիտարական հանձնաժողովի ցուցումները չկատարելու դեպքում, սանհանձնաժողովն այդ մասին հայտնում է տան կառավարչին, պարետին կամ պետսանտեսչին մեղավորների վրա համապատասխան տույժեր դնելու համար:

Ծանոթություն·— Ցուցումները տան կառավարչի, պարետի կողմից չկատարելու դեպքում, սանիտարական հանձնաժողովը հայտնում է պետսանտեսչին:

13· Սանիտարական հանձնաժողովն իրավունք ունի ընկերական դատի յենթարկելու բնակելի շենքերը հակասանիտարական դրության մեջ պահող տնվորներին:

ՀՀ Ազգային գրադարան
NL0270329

Գլավլիտի լիազոր Ն 2267
Պատ· № 478, Տիրաժ 3000

Հայկ· ԽՍՀ ԺԿԽ-ի հրատարակչ· «Խ· Հ·»-ի տպարան, Յերևան

416

3443